



Աշխատողների անվտանգությունը COVID-19-ի պայմաններում




COVID-19 համավարակը ցույց տվեց մեր սննդաարդյունաբերության համակարգի խոցելիությունը, այն դեպքում, երբ գյուղատնտեսությունը ճանաչվել է կենսապահովման ոլորտ: Աշխատանքները շարունակվում են նաև համավարակի պայմաններում: Այդ նպատակով կազմակերպություններում պետք է ներմուծվեն հատուկ անվտանգության միջոցառումներ և արհմիությունները պետք է վերահսկեն այդ գործընթացը:




Աշխատողների միջև հեռավորությունը պետք է մեծացվի մինչև 2 մետր, աշխատանքի տարածքը ընդլայնելու, արտադրական հոսքագծերի հերթփոխը վերաբաշխելու և փոխակրիչների արագությունը նվազեցնելու միջոցով:



Ընդմիջման ժամանակատվածը պետք է բաշխվի այպես, որ աշխատողները սոցիալական հեռավորություն պահպանելու հնարավորություն ունենան: Հնարավորության դեպքում պետք է առանձնացվեն լրացուցիչ տարածքներ:



Աշխատանքի ներկայանալու համար և տուն գնալու նպատակով պետք է տրամադրվի տրասպորտային միջոց, կազմակերպության աշխատողներին հասարակական տրասպորտից օգտվելուց զերծ պահելու նպատակով:




Ցանկացած հավաքի և հանդիպման, այդ թվում արհմիութենական միջոցառումների, մասնակիցների թիվը պետք քիչ լինի և ապահովի 2 մետր սոցիալական հեռավորություն:



COVID-19 համավարակի պայմաններում, վարակի տարածումը կանխելու համար, հնարավորության դեպքում պետք է աշխատել տնից հեռավար եղանակով:

**Պաշտպանության միջոցառումներ իրականացվում են բոլոր աշխատողների համար, անկախ զբաղվածության տեսակից:*



Այն դեպքերում երբ 2 մետր սոցիալական հեռավորության ապահովումը հնարավոր չէ, աշխատողները պետք է ունենան անհատական պաշտպանիչ միջոցներ և կրեն դրանք:

Հիվանդությունը անախտանիշ կրող մարդը նույնպես կարող է վարակել մյուսներին:




Ձեռքերի լվացումը և ախտահանումը, հարմարավետ տեղադրված սանիտարական սարքերի օգնությամբ պետք է լինի աշխատանքային գործընթացի պարտադիր մաս, որի համար պետք է հատկացվեն հատուկ ընդմիջումներ:

Աշխատողները պետք է ունենան խմելու ջրի մշտական հասանելիություն:

Անհրաժեշտ է մակերեսների պարբերական և մանրակրկիտ ախտահանում, այդ թվում հանգստի և սնվելու համար նախատեսված տարածքներում:

Խորհուրդ է տրվում չափել կազմակերպության տարածք մուտք գործող բոլոր անձանց ջերմությունը:



Հիգիենայի կանոնների մասին տեղեկատվությունը պետք է փակցված լինի հասանելի և տեսանելի վայրում՝ աշխատողների համար հասկանալի լեզվով:

Բոլոր գնորդները և մատակարարները նույնպես պետք է տեղեկացված լինեն այդ մասին:



Եթե աշխատողը վատ ինքնազգացողություն ունի, նա չպետք է ներկայանա աշխատանքի: Այս հանգամանքը շատ էական է համավարակի պայմաններում և ժամանակավոր անաշխատունակության վճարովի տրամադրումը առավել կարևոր է:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՄԵՆՕՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



Լվացե՛ք ձեռքերը



Մի դիպչե՛ք դեմքին



Խուսափե՛ք վարակի ախտանշաններ ունեցող անձանց հետ շփվելուց

COVID-19-ը չունի ընտրովի մոտեցում, ցանկացած մարդ թիրախում է և կարող է հիվանդանալ անկախ ազգությունից, մաշկի գույնից և էթնիկ խմբի պատկանելիությունից: